Գլենդելի հարգելի Տանտերեր եւ Վարձակալներ,

Մենք ցանկանում ենք օգտակար լինել եւ կապ պաշտպանել Ձեր հետ այս ոչ սովորական ու դժվարին ժամանակներում, եւ տեղեկացնել, որ Ձեզ դիտարկում ենք որպես գործընկեր՝ մեր համայնքն անվտանգ պահելու գործում: Մենք գիտակցում ենք, որ մինչ բոլորն են ազդվել այս համավարակի բռնկման պատճառով, ոմանց վրա այն ավելի շատ ազդեցություն է ունեցել, քան մյուսների:

Փաստերի այս ամփոփագրի նպատակն է տանտերերին ու վարձակալներին տրամադրել գործիքներ եւ ռեսուրսներ այն իրավիճակում, երբ նրանք ունեն եկամուտի աննախադեպ կորուստ եւ անորոշության մեջ են: Մեր նպատակն է ապահովել միմյանց հետ արդյունավետ եւ հետեւողական շփում: Այս մոտեցմամբ ներկայացնում ենք ճանապարհային քարտեզ այն մասին, թե ինչպես պետք է վարվեն տանտերերն ու վարձակալները՝ վտարման եւ վարձակալության մասին քաղաքապետարանի հրահանգների պայմաններում:

Ի հավելումս այս միջոցառումների, Լոս Անջելեսի վարչաշրջանի COVID-19 Վարձավճարի մեղմացման ծրագիրը կսկսի հայտեր ընդունել Օգոստոսի 17-ից Օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում: Գլենդելի վարձակալները ԿԱՐՈՂ են դիմել այս ծրագրին: Վարձակալները (վարձակալներ, ում անունը նշված է վարձակալության պայմանագրում) կարող են դիմել՝ կա՛մ զանգահարելով 2-1-1, կա՛մ լրացնելով առցանց դիմումաձեւ, որը հասանելի կլինի վարչաշրջանի կայքէջում (211la.org/lacounty/rentrelief): Լրացուցիչ տեղեկություններ ստանալու եւ, առկայության դեպքում դիմումի առցանց հղումը տեսնելու համար՝ այցելեք Glendaleca.gov/rent:

Իրականությունն այն է, որ մինչ համաճարակը եւ հատկապես այժմ, տանտերերն ու վարձակալները միմյանց կարիքն ունեն հաջողելու համար: Եթե կարծում եք, որ կարիք ունեք, խնդրում ենք դիմել օգնության: Եթե գտնում եք, որ ի վիճակի եք օգնել, խնդրում ենք այդ մասին տեղեկացրեք ձեր հարեւաններին: Խնդրում ենք բարի եղեք, ուշադիր եղեք միմյանց նկատմամբ եւ հնարավորինս աջակցեք ձեր հարեւաններին՝ միաժամանակ պահպանելով ֆիզիկական հեռավորություն եւ դեմքին կրելով դիմակ:

Մենք հասկանում ենք, որ գործը պետք է շարունակվի, սակայն նաեւ պետք է գիտակցենք, որ արտակարգ իրավիճակի պայմաններում ենք: Միասին աշխատելու եւ միմյանց հարգելու մեր ունակությունն անհրաժեշտ է՝ բոլորին անվտանգ եւ առողջ պահելու համար:

Հարցերի համար կապվեք Գլենդելի Բնակարանային վարչությանը՝ **818-548-3926** հեռախոսահամարով կամ **rent@glendaleca.gov:** Մենք բոլորս միասին ենք այս իրավիճակում:

Շնորհակալություն,
Գլենդելի քաղաքապետարան

ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՎՏԱՐՄԱՆ ՀԵՏԱԶԳՄԱՆ ՓԱՍՏԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՏԱՆՏԵՐԵՐԻՆ ԵՒ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ. Գլենդելի COVID-19 Վտարման Հետաձգման հրամանագրով (moratorium) կասեցվում է վարձը չվճարելու պատճառով բնակիչների վտարումը: Հետաձգման հրամանագիրն ուժի մեջ է 2020 թվականի Մարտի 24-ից, եւ նախատեսվում է, որ կավարտվի 2020 թվականի Օգոստոսի 31-ին, եթե այլեւս չերկարաձգվի Քաղաքային խորհրդի կողմից: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք www.Glendaleca.gov/Rent: Եթե վարձակալ եք, ապա հրամանագիրը Ձեզ ժամանակավորապես ապահովում է վարձը չվճարելու դեպքում վտարումից, եթե կարողանաք ցույց տալ, որ Ձեր եկամուտը զգալիորեն կրճատվել է COVID-19 համաճարակի պատճառով:

ՏԱՆՏԻՐՈՋ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Տանտերը չպետք է նախաձեռնի վտարում կամ վարձի վճարումն ուշացնելու համար հավելյալ գանձում կատարի՝ բնակչի կողմից վարձը չվճարելու դեպքում, եթե վարձակալը գրավոր ծանուցում եւ փաստաթղթեր է ներկայացնում COVID-19- ի պատճառով վարձը վճարելու անկարողության մասին:



1. Արդյունավետ հաղորդակցության նպատակով, տանտերը պետք է վարձակալին ներկայացնի www.Glendaleca.gov/Rent կայքում առկա ռեսուրսների ցուցակն ու վտարման հետաձգման հրամանի մասին ծանուցումը:
2. Տանտերերը կարող են շարունակել վարձը հավաքել վարձակալներից, ում դեպքում COVID-19ը ֆինանսական անբարենպաստ ազդեցություն չի ունեցել
3. Տանտերերը չեն կարող հայտնել վարձի նոր բարձրացման մասին մինչեւ արտակարգ դրության ավարտը, եթե նույնիսկ բարձրացման ժամկետը արտակարգ դրության ավարտից հետո է:

ՎԱՐՁԱԿԱԼԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Եթե COVID-19-ը ազդել է Ձեր վրա, այդ մասին Ձեր տանտիրոջը տեղեկացրեք ԱՆՄԻՋԱՊԵՍ:
Եթե COVID-19-ը որեւէ կերպ ազդեցություն չի ունեցել Ձեր վրա, դուք ՊԵՏՔ է վճարեք ձեր վարձը:

Անմիջապես տեղեկացրեք տանտիրոջը, որ չեք կարող վճարել վարձը՝ լրացնելով Վարձը Չվճարելու Մասին Ծանուցումը, որը կարող եք գտնել www.Glendaleca.gov/Rent կայքում: Ծանուցումը լրացնելու համար անհրաժեշտ է՝

1. Օգոստոսի 1-ին վարձի վճարման ժամկետը լրանալու պահից, տանտիրոջը տեղեկացնել, թե հատկապես ինչ ձեւով է COVID-19ը ազդել Ձեր վրա.
   - Աշխատանքի կորուստ
   - Աշխատանքային ժամերի կրճատում
   - Պետական կամ տեղական մակարդակով արտակարգ իրավիճակ, ինչն արգելք է հանդիսացել Ձեր աշխատանքի համար:
   - Արտակարգ չնախատեսված ծախսեր, ինչպես օրինակ՝ բժշկական ծախսեր
   - Դպրոցի փակման պատճառով, երեխային խնամելու համար աշխատանքից բացակայություն
   - COVID-19ով հիվանդանալու կամ COVID-19ով հիվանդ տան/ընտանիքի անդամին խնամելու պատճառով աշխատանքից բացակայություն

2. Փաստաթղթեր ներկայացնել COVID-19-ի պատճառով եկամուտը կորցնելու մասին
   - Նամակ գործատուից, որտեղ COVID-19ը նշվում է որպես աշխատանքային ժամերի կրճատման կամ աշխատանքի դադարեցման պատճառ
   - Աշխատավարձի հայտարարագրեր՝ տրված COVID-19-ի առաջ եւ հետո
   - Բժշկական հաշվետվություն (կապված COVID-19-ի հետ)
   - Բանկային հաշվետվություններ, որոնք ցույց են տալիս ֆինանսական իրավիճակը նախկինում եւ համաճարակի բռնկվելուց հետո
   - Երեխայի խնամքի հետ կապված ծախսեր
   - Աշխատանքի դադարեցման մասին ծանուցումներ

Վարձակալները պետք է վճարեն հետաձգված բոլոր տեսակի վարձերը, Հետաձգման հրամանի ավարտից հետո 12 ամսվա ընթացքում: Վարձակալը պարտավոր է տասներկուամսյա մարման ժամկետի յուրաքանչյուր երրորդ ամսվա վերջում վճարել մարվող վարձի առնվազն 25%-ը, եթե տանտերը եւ վարձակալը համաձայնության չեն գալիս մարման այլ պայմանների շուրջ: Եթե վարձակալը հեռանում է տվյալ բնակարանից վարձի մարման շրջանում՝ պետք է անմիջապես վճարի վարձի ողջ գումարը:

Հավելյալ տեղեկությունների համար՝ Glendaleca.gov/Rent - 818-548-3926 -Rent@Glendaleca.gov